ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ «ՍՊԱՌՆՈՒՄ» Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԵՏ ՉԿԱՆՉԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

11.10.2013 11:47

ՀՀ Հանրային խորհրդի փոքր խորհրդի նիստի օրակարգում այսօր ներառված է եղել «Փաստաբանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Այն ներկայացրել է Հանրային խորհրդի անդամ, ՀԽ պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Գրիգոր Բադիրյանը:

«Հանրային խորհրդի փոքր խորհրդի նիստի ժամանակ Հանրային խորհրդի անդամները որոշեցին քննադատորեն վերաբերել այդ նախագծին և դատապարտել դրա ընդունումը»,- Իրավաբան.net-ի հետ զրույցում ասաց ՀԽ պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Գրիգոր Բադիրյանը:

Քննարկման ընթացքում ներկաները համակարծիք են եղել, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում պետական գրանցամատյանը վարելու նոր ընթացակարգը, որը նախատեսում է նաև գրանցամատյանում հաշվառելու համար գանձվող տարեկան վաթսուն հազար դրամ տուրք, բացասական ազդեցություն կունենա դատիրավական ոլորտի վրա՝ խոչընդոտելով փաստաբանների անկախ ու անկաշկանդ գործունեությունը: Ինչ վերաբերում է գանձվող գումարին, որը պետք է ուղղվի անվճար իրավաբանական օգնությանը, ապա դա նույնպես համարվել է անթույլատրելի, քանի որ անվճար իրավաբանական օգնության համար օրենքով սահմանված կարգով պարտավոր է վճարել պետությունը:

Նշվել է, որ օրենքի նախագծերին դեմ է Փաստաբանների պալատը, որի նախագահ Արա Զոհրաբյանը հանդիսանում է նաև Հանրային խորհրդի պետաիրավական հարցերի հանձնաժողովի արդարադատության, դատարանակազմության և փաստաբանության ենթահանձնաժողովի նախագահը:

Հանրային խորհրդի անդամները հույս են հայտնել, որ կառավարությունը հետ կվերցնի նախագծերը, իսկ եթե ոչ, հարցը քննարկման կդրվի Հանրային խորհրդի լիագումար նիստին, որին կհրավիրվի նաև ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Աղբյուրը՝
http://iravaban.net/2013/10/11/%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D5%B8%D6%82%D6%80%D5%A4%D5%A8-%D5%BD%D5%BA%D5%A1%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A--%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1/

Նախորդ նորությունը: ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՎԵՌԱԿԱՆ Է. ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԾՈՎ ԻՐԵՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՈՐԵՎԷ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Հաջորդ նորությունը: ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉՊԵՏՔ Է ՄԻՋԱՄՏԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՆԿԱԽ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ. ՕՄԲՈՒԴՍՄԵՆ

Առաջարկվող նորություններ

24.10.2013«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՄՈԿԿ ՆԱԽԱԳԱՀ Է.ՄԱՆԵՎԻԴԻՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

24.10.2013 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՑ ԽԼՈՒՄ ԵՆ 82 ՄԻԼԻՈՆ

24.10.2013ԸՆԴԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՒՐՔԻ

16.10.2013ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })